

եղին զնա կաթողիկոս Հայոց»⁷։ Սմբատ ոչինչ կ'ըսէ Գրիգոր Ապիրատի կաթողիկոսութեան տիրանալու փորձին՝ թոյլ չտալով Գրիգոր Տղայի մուտքը Հռոմկլայի կաթողիկոսարան-բերդը։ Սմբատ ժամանակակից չէ զէպքերուն, եւ սակայն կրնար խմացած ըլլալ Գրիգոր Ապիրատի կաթողիկոսութեան տիրանալու փորձերուն մասին։ Սըմբատ մեծ դուլեստով կը խօսի Գրիգոր Տղայի մասին, բաւական երկար, մինչ Գրիգոր Ապիրատի կաթողիկոսանալուն մասին հազիւ քանի մը խօսք կ'ընէ հարեւանցի։ Սմբատ է միայն որ Գրիգոր Տղան Ներսէս Շնորհալիի «կտակ»ով անոր յաջորդ կաթողիկոս կը ներկայացնէ, մինչ Միխայէլ Ասորի, ժամանակակից եւ քաջատեղեակ, նըման կտակի մը մասին յիշատակութիւն չ'ըներ։ Եթէ իրապէս, Սըմբատի ըսածին պէս, «կտակ» մը կար՝ կաթողիկոսութիւնը Գրիգոր Տղայի պատուիրող, զարմանալի է որ Ապիրատ կաթողիկոսութեան տիրանար, հակառակ իր հօրեղբոր՝ Ներսէս Շնորհալիի «կտակ»ին։ Սմբատ ոչ մէկ յիշատակութիւն ունի Տղայի ըրած զիմուսին մասին իր փեսային՝ Մլեհի, եւ անոր միջոցով՝ Նուր Էդ-Տին Զանգիի, Հալէպի տիրոջ, որուն իշխանութեան մէջ էր Հռոմկլայ, եւ Նուր Էդ-Տինի միջամտութեամբ՝ Հռոմկլայի եւ կաթողիկոսութեան տիրանալուն։ Եթէ կար «կտակ» մը, տարակուսելի է որ Գրիգոր Ապիրատ յանդգնէր կաթողիկոսութիւնը իւրացնելու՝ հակառակ կտակին։ Յետոյ՝ առանձին չէր կրնար կաթողիկոսութեան տիրանալ. պէտք էր որ արբանեակներ ունենար։ Կը խորհիմ որ «կտակ» գոյութիւն չուներ, ու Ներսէսի մահէն ետք՝ Գրիգորիս Ապիրատ «քարոզեցաւ կաթողիկոս», քանի որ Գրիգոր Տղայ Հռոմկլայ չէր։ Չենք զիտեր թէ Գրիգոր Տղայ ո՛ր կը գտնուէր Ներսէս Շնորհալիի մահուան ատեն, սակայն որոշ է որ մեռնող կաթողիկոսին մօտ չէր։

ԺԳ. զարէն նկատուող Ստեփանոս եպիսկոպոս մը, իր ժամանակագրութեան մէջ տեղեկութիւններ կու տայ Գրիգոր Տղայի մասին։ Որոշ է որ Ստեփանոս Միխայէլէն չէ օգտուած, քանի որ իր տուած տեղեկութիւնները խառնակ են, մինչ Միխայէլ՝ պարզ ու մեկին, ժամանակագրական որոշ կարգով կը ներկայացնէ զէպքերը եւ զէմքերը։ Ստեփանոս կը զրէ. «Արդ՝ յետ մահուան Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի, յաջորդէ յաթոռն Գրիգորիս Տղայն ամ մի։ Եւ յազազս զարբանութեան ինչ ըմբռնեալ եղեւ ի մեծ իշխանէն Կիրիկիոյ՝ Լեւոնէ, եւ արգելեալ յամուրն Կոպիտառայ։ Ի զիշերի կամեցաւ ելանել եւ կախեալ ընդ բարձր պարիսպն, անկաւ եւ մեռաւ։ Եւ ապա յաջորդէ ի տեղին միւս Գրիգորիս, Ապիրատն կոչեցեալ, եղբաւր որդի մեծ հայրապետացն՝ Գրիգորի եւ Ներսէսի, որ եւ ի մահուան նորին, նախ սա քարոզեցաւ կաթողիկոս, եւ զկնի եկն էրէց եղբաւր

որդին վայելչագեղն Գրիգորիս. եւ ի ձեռն Մլեհայ իշխանին, հրամանաւ եւ ուժով Նորադին ամիրային եհան զնա եւ նստաւ ինքն»⁸։

Ստեփանոս եպիսկոպոս ժամանակագրական կարգը վերիվայր ըրած է՝ իր այս վկայութեան մէջ։ Գրիգորիս՝ որուն յաջորդ կը յիշէ Տղայն, Գրիգորիս Քարավէժն է, զոր Ստեփանոս չփոթութեամբ «Տղայն» կը կոչէ, մինչ Քարավէժն էր որ Տղային յաջորդեց։ Քարավէժն էր՝ զոր Լեւոն (Մեծազործ) բանտարկեց, եւ սրբիսպէն իյնալով մեռաւ։ Գրիգորիս Քարավէժին յաջորդեց, կ'ըսէ Ստեփանոս, Գրիգորիս Ապիրատ «որ եւ ի մահուան նորին (Ներսէս Շնորհալիի), նախ սա քարոզեցաւ կաթողիկոս եւ զկնի եկն էրէց եղբաւր որդին (Ներսէս Շնորհալիի) վայելչագեղն Գրիգորիս. եւ ի ձեռն Մլեհայ իշխանին, հրամանաւ եւ ուժով Նորադին եհան զնա եւ նստաւ ինքն (Տղայն)»։ Ստեփանոսի վկայութեան այս մասը ճիշտ է ժամանակագրութեամբ։

Այսպէս, ուրեմն, Միխայէլէ զատ, որ ժամանակակից էր, ունինք նաեւ Ստեփանոս եպիսկոպոսի (ԺԳ. զար) վկայութիւնը՝ թէ Գրիգոր Տղայ Մլեհի եւ Նուր Էդ-Տինի օժանդակութեամբ տիրացաւ Հռոմկլայի եւ կաթողիկոսութեան, անկէ հանելով Գրիգորիս Ապիրատը՝ որ Ներսէս Շնորհալիի մահէն ետք «քարոզեցաւ կաթողիկոս»։

Վարդան վարդապետ ալ ասիկա կը հաստատէ ըսելով. «Ի վեցհարիւր քսան եւ մի թուին կատարեաց պատրիարքն Ներսէս զվարս իւր...։ Եւ առնու զքօղն Գրիգոր եղբօրորդի իւր ձեռնտուութեամբ Նորադին»⁹։ Վարդան ոչ միայն կտակի խօսք չ'ըներ, այլ որոշ կերպով կ'ըսէ որ Տղայ կաթողիկոսական «քօղն» կը ստանայ «ձեռնտուութեամբ Նորադին», այսինքն՝ Նուր Էդ-Տին իր ոյժը կը գործածէ Գրիգոր Տղան կաթողիկոս ընելու, անշուշտ Գրիգոր Ապիրատի եւ իր կողմնակիցներուն զէմ, երբ Ապիրատ արդէն տէր էր Հռոմկլայի եւ «քարոզեցաւ կաթողիկոս»։ Հետաքրքրական է որ Վարդան Մլեհը չի յիշեր հոս այս գործին կապակցութեամբ։

Ապիրատի եւ Տղայի մարտնչումը՝ Հռոմկլայի կաթողիկոսութեան տիրանալու համար կ'երեւի թէ սուր հանգամանք չստացաւ եւ խաղաղութեամբ կարգադրուեցաւ։ Ապիրատ անտարակոյս նկատի առնելով Նուր Էդ-Տինի միջամտութիւնը եւ Տղան կաթողիկոս տեսնելու ցանկութիւնը՝ խոհեմութեամբ տեղի տուաւ եւ հեռացաւ Հռոմկլայէն, Տղայէն ի փոխարէն ստանալով Լամբրոնի, Տարսոնի եւ Կեսարիոյ շրջաններուն եպիսկոպոսական տէրութիւնը¹⁰։

8. Անդ։

9. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. Հաւաքումն պատմութեան, Վենետիկ - Ս. Ղազար, 1862, էջ 129։

10. ՄԻԽԱՅԷԼ ԱՍՈՐԻ, Անդ, էջ 472։ Տէ՛ս նաեւ Մանր ժամանակագրութիւններ, Ա. հտր., էջ 35։

7. Մանր ժամանակագրութիւններ, Ա. հտոր, էջ 35։

ջինս իր «Բան Ողբերգական վասն առման Երուսաղէմի» ընդարձակ
ոտանաւորին մէջ, կ'ըսէ.

«Չհրաշազան գործս քաջին,
Այն, որ Տերամբ զհայրենին
էառ զաթոռ ժառանգ բարին.
Լեւոն սիրողն Քրիստոնէին,
Խնամեալ աջովն Յիսուսին»: (Տող 2019-2024)

Սակայն, եթէ Լեւոն պատկառանք եւ համարում ունեցաւ Գրիգոր
Տղայի հանդէպ՝ անոր ընտիր կարողութեանց համար, դժբախտաբար
նոյնը չեղաւ Գրիգոր Քարավէժ երիտասարդ եւ անփորձ կաթողիկոսին
վերաբերմամբ:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍ՝ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻՆ ԱՌՋԵՒ

ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՑԸ

(Շար. տե'ս «Բազմավէպ», 1974, ք. 3-4, էջ 326-337)

ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԶԱՆԱԶԱՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Մինչեւ ԺԸ. դար, համարաբար Աւետարաններու կնճռոտ հար-
ցը լուծելու համար ամբողջական եւ խոր ուսումնասիրութիւններ լոյս
չեն տեսած. այլ, ինչպէս տեսանք, Ս. Հայրեր կամ Ս. Գիրքի մեկ-
նարաններ ջանացած են առաւել կամ նուազ յաջող անդրադարձում-
ներով՝ իրարու հետ հաշտեցնել Աւետարաններու մէջ գտնուող տար-
բերակները:

1784ին է որ լոյս տեսաւ G. E. Lessingի ուսումնասիրութիւնը,
որուն մէջ կը յայտնէր նոր ենթադրութիւն մը, այսինքն՝ թէ երեք
Աւետարանները միաժամանակ իրարու նման եւ տարբեր թարգմա-
նութիւններն են միեւնոյն արամայերէն Աւետարանի մը:

Երկու տարի ետք, G. C. Storr նոր կարծիք մը նետեց հրապա-
րակ, որուն համաձայն՝ Մարկոսի Աւետարանը ամէնէն հին Աւետա-
րանն է, Մատթէոս եւ Ղուկաս դոնէ մասամբ օգտուած են անկէ:

1789ին, նոր կարծիք մը եւս մէջտեղ կ'ելլէր, J. J. Griesbachի
կողմէ: Անիկա ընդունելով հանդերձ երեք Աւետարաններու միջեւ դո-
յութիւն ունեցող կախումնաւորութիւն մը, Մատթէոսի Աւետարանը
կը նկատէր գլխաւոր աղբիւրը, իսկ Մարկոսին՝ միւս երկու Աւե-
տարաններուն համառօտութիւնը:

G. Herderի (1796) համաձայն՝ գոյութիւն ունէր «բերանացի մէկ
Աւետարան», որմէ առաջ եկած են երեք գրաւոր Աւետարանները:

Յաջորդաբար, մինչեւ մեր օրերը, Ս. Գիրքի ուսումնասիրու-
թիւնները կը խորանան եւ երեւան կ'ելլեն բազմաթիւ կարծիքներ: